ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՆՊԱՍՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիայում ծավալված հայանպաստ շարժումը կարելի է բաժանել երկու մասի՝ քաղաքական հարթության վրա ընթացող գործունեություն, որն իրականացնում էր 1913թ. ստեղծված Բրիտանիա-Հայաստան կոմիտեն, և մարդասիրական օգնություն տրամադրող կազմակերպությունների իրականացրած քայլեր, որոնք ստեղծվեցին ցեղասպանության հետևանքով ի հայտ եկած բազմահազար հայ փախստականներին օգնելու համար:

Այդ կազմակերպություններից հատկապես լայնածավալ գործունեություն ծավալեցին երկուսը՝ Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը և Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդը: Փորձենք ներկայացնել նրանց ծավալած գործունեության հիմնական ուղղություններն ու արդյունքները՝ համառոտ խոսելով նաև այդ շրջանում ստեղծված և նույնպես մարդասիրական օգնության բնագավառում քայլեր իրականացրած բրիտանական այլ կազմակերպությունների գործունեության մասին:

Պատերազմի ընթացքում ստեղծված առաջին բրիտանական կազմակերպությունը, որն իր առջև նպատակ էր դրել օգնել հայ փախստականներին, Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդն էր: Ֆոնդի հիմնադիր համաժողովը տեղի ունեցավ 1914թ. դեկտեմբերի 18-ին: Նրա ստեղծման նախաձեռնությունը պատկանում էր 1913թ. հիմնադրված «Հայկական ընկերության» քարտուղար Էմիլի Ռոբինսոնին: Ֆոնդն իր առջև նպատակ էր դրել նաև օգնել ռուսական բանակում մարտնչող հայ կամավորներին: Հիմնադիր համաժողովին իրենց մասնակցությունը բերեցին Լոնդոնի միացյալ հայկական ընկերության ղեկավար անդամները, այդ թվում ընկերության նախագահ Գրեգորին:[1]

Ֆոնդի ղեկավար կազմը բավականին ներկայացուցչական էր՝ նախագահն էր Լեդի Բրայսը, այն ուներ 26 փոխնախագահներ (նշենք մի քանիսին՝ Լորդ Բրայս, Ալիսթեր Ֆրեյզեր, Լեդի Հենրի Սոմերսեթ, Լեդի Ֆրեդերիկ Գավնդիշ, գնդապետ Գրեգորի, Պատվելի Ստեֆեն Գլադստոն, սըր Էդվարդ Բոյլ, սըր Էդվին Փիրս, Անհուրին Վիլիամս, Նոել Բաքս

թոն և ուրիշներ): Ֆոնդի պատվավոր գանձապահն էր տիկին Լիդիա Չեմբերսը, պատվավոր քարտուղարն էր օրիորդ Էմիլի Ռոբինսոնը: Նշենք նաև, որ ֆոնդն ուներ նաև 11 անդամներից բաղկացած ընդհանուր կոմիտե:[2]

Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդն ընդհուպ մինչև 1915թ. հոկտեմբերի կեսերը, երբ հիմնադրվեց Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդը, հանդիսանում էր հայ փախստականներին օգնություն տրամադրող հիմնական բրիտանական կազմակերպությունը: Ֆոնդի ղեկավար անձանց անվանացանկը հավաստում է, որ ֆոնդի աշխատանքներում ներգրավվել էին նաև դեռևս 19-րդ դարի վերջում հիմնված հայանպաստ մի շարք կազմակերպությունների ղեկավարներ, մասնավորապես՝ «Հայաստանի բարեկամներ» ընկերության նախագահ լեդի Ֆրեդերիկ Գավնդիշը:

Արդեն 1915թ. հունվարին ֆոնդն առաջին 200 ֆունտ ստեռլինգ գումարն ուղարկեց Մոսկվայում բրիտանական գլխավոր հյուպատոսին՝ խնդրելով գումարը փոխանցել Թիֆլիսի քաղաքագլխին. այն պետք է հավասարապես բաժանվեր փախստականների և հայ կամավորների բժշկական կարիքների համար:[3]

1915թ. հունվարի 12-ին "The Times" պարբերականում հրապարակվեց Լեդի Սոմերսեթի, Լեդի Գավնդիշի և Լորդ Բրայսի բրիտանական հասարակությանն ուղղված կոչը, որը, ներկայացնելով նորաստեղծ ֆոնդի նպատակները (բժշկական պարագաների և հագուստների ուղարկում և հայ փախստականներին օգնության տրամադրում), կոչ էր անում ինչպես դրամական օգնություն, այնպես էլ տաք հագուստներ և այլ պարագաներ տրամադրել և ռուսական բանակում մարտնչող հայ կամավորներին և հայ փախստականներին:[4]

Այս ֆոնդը միջոցներ էր ուղարկում ոչ միայն Թիֆլիսի քաղաքագլխին: Այսպես, 1915թ. ապրիլի 16-ին պրն. Բոնը 600 ֆունտ ստեռլինգ փոխանցեց Մոսկվայում բրիտանական գլխավոր հյուպատոսին՝ խնդրելով գումարը փոխանցել Ամենայն հայոց կաթողիկոսին՝ որպես նվիրատվություն վերջինս գլխավորած ֆոնդին: Ընդ որում, գումարի կեսը պետք է տրամադրվեր հայ կամավորների համար Կարմիր խաչի աշխատանքներին, իսկ մյուս կեսը պետք է օգտագործվեր փախստականներին օգնելու նպատակով:[5]

Քանի որ Բրիտանիայում ստեղծված կազմակերպություններն իրենց հավաքած գումարները հիմնականում փոխանցում էին Կովկասում արդեն գործող բարեգործական հայկական կազմակերպություններին, հարկ է, կարծում ենք, համառոտ ներկայացնել վերջիններիս գործունեությունը և, ընդհանրապես, Կովկասում հայ փախստականների հետ կապված իրավիճակը:

Նշենք, որ կովկասյան ճակատի փախստականների դրությունը կարգավորող գլխավոր մարմնի դիվանատան տվյալների համաձայն, Կովկասյան երկրամասում 1916թ. հունվարի 1-ի դրությամբ ապաստանել էին 234400 փախստական: Նույն տարվա դեկտեմբերի 1-ի դրությամբ վերջիններիս թիվն արդեն հասել էր 373553-ի, իսկ 1917թ. սկզբին, մի փոքր նվազելով, կազմում էր 283063:[6]

Փախստականների խնդիրների կարգավորմամբ զբաղվում էին թե՛ պետական մարմինները և թե՛ տարբեր հասարակական կազմակերպություններ: 1915թ. հոկտեմբերի 29-ին հրապարակվեց Ռուսաստանի ներքին

գործերի նախարարության կողմից հաստատված «Կայսրության ներսում գաղթականների տեղավորման գլխավոր լիազորների» հրամանը, իսկ մինչ այդ՝ 1915թ. հոկտեմբերի 19-ին, Կովկասի փոխարքային կից կովկասյան ճակատի գաղթականների տեղավորման գլխավոր լիազոր էր նշանակվել գեներալ-մայոր Ալ. Թամամշյանը (Թամամշև): Հասկանալի է, որ հայ հասարակությունը ևս չէր կարող անտարբեր մնալ ծանր իրավիճակում հայտնված իր հայրենակիցների ճակատագրի հանդեպ: Գաղթականներին օգնելու գործում մեծ դեր խաղացին հատկապես Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը և Հայկական կենտրոնական կոմիտեն, Հայ նպաստամատույց և «Մեղու» ընկերությունները, Հայ տիկնանց և Հայ ուսուցչական կոմիտեները, Հայրենակցական միությունների միությունը, Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Կարսի և այլ բնակավայրերի Եղբայրական օգնության կոմիտեները, Հայ գյուղատնտեսական ընկերությունները, Քաղաքների միության կոմիտեն և այլ կազմակերպություններ:[7]

Կովկասում գործող՝ փախստականներին օգնություն ցույց տվող այդ կազմակերպություններից մի քանիսի հետ բրիտանական կազմակերպությունները սերտ հարաբերություններ էին հաստատել:

Ինչ վերաբերում է Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդի առաջին տարվա գործունեությանը՝ ապա 1915թ. դեկտեմբերի դրությամբ այն հավաքել էր 4600 ֆունտ ստեռլինգ գումար՝ չհաշված ֆոնդի անունով ստացված հագուստեղենը: Ֆոնդը շարունակում էր գումարների հիմնական մասը Կովկաս ուղարկել Մոսկվայում բրիտանական հյուպատոսի միջոցով: Մասնավորապես, նոյեմբերին նրան էր փոխանցվել 1000 ֆունտ ստեռլինգ Ամենայն հայոց կաթողիկոսին ուղարկելու համար:[8]

Ավելորդ չէ համառոտ ներկայացնել ֆոնդի առաջին տարեկան հաշվետվությունը: Համաձայն դրա, ֆոնդը այդ ժամանակահատվածում ստացել էր 47000ռ., ընդ որում մեծամասնությունը ոչ թե հայերից, այլ անգլիացիներից: Գումարների մեծամասնությունը ժամանակին ուղարկվել էին Մոսկվայում անգլիական հյուպատոսին: Որոշ գումարներ փոխանցվել էին անմիջապես Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսովին: Թիֆլիս էին ուղարկվել նաև զգալի քանակությամբ տաք շորեր և 3000ռ. դեղամիջոցներ:[9]

Նշենք, որ բրիտանական նպաստամատույց կազմակերպությունների և Կովկասում ստեղծված փախստականներին օգնող հայկական հասարակական կազմակերպությունների համագործակցությունը միշտ չէ, որ ընթանում էր առանց տարաձայնությունների: Այդ են հավաստում, մասնավորապես, լոնդոնաբնակ ոմն պրն. Տոնապետյանի՝ 1916թ. մարտի 4-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ին ուղարկված նամակը և դրան կցված նյութերը: Նյութերում բերվում է Տոնապետյանի նամակը՝ ուղղված օր. Ռոբինսոնին, որով Տոնապետյանն իր անհանգստությունն է արտահայտում այն բանի կապակցությամբ, որ ֆոնդը 1915թ. դեկտեմբերի 10-ին 200 ֆունտ ստեռլինգ է ուղարկել պրն. Սաֆրաստյանին:

Տոնապետյանը նշում է, որ դա համարում է վիրավորանք արդեն գործող հայկական բարեգործական կազմակերպությունների համար: Հետաքրքիր է, որ Տոնապետյանին ուղարկված պատասխանում Ռոբինսոնը նշում է, որ Կովկասում նպաստամատույց աշխատանքների կազմակերպումը բարձր մակարդակի վրա չէ: Նա նաև իր ուրախությունն է արտահայտել այն բանի կապակցությամբ, որ ամերիկյան նպաստամատույց կոմիտեն (խոսքն Հայերի և ասորիների նպաստամատույց կոմիտեի մասին

է), առաքելություն է ուղարկել Թիֆլիս և դրա շնորհիվ իրենք կկարողանան ստանալ անկախ վկայություններ: Այն փաստի մասին, որ այդ խնդիրը միայն Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդին չէ, որ մտահոգում էր, խոսում է նույն այդ նյութերում բերված մի հրապարակում "The Friend of Armenia" պարբերականից, որտեղ նշվում էր, որ իրենք, վստահ չլինելով Ռուսաստան ուղարկված միջոցների ճակատագրի հարցում՝ առայժմ հետաձգում են դրանց առաքումը:[10]

Ճիշտ է, կաթողիկոսին ուղարկված նամակում պրն. Տոնապետյանը կարծիք է հայտնում, որ դրա պատճառը, թերևս, պրն. Սաֆրաստյանի՝ օր. Ռոբինսոնին ուղարկված նամակներն են, որոնցում նամակագիրը վատ գույներով է ներկայացրել Կովկասում գործող հայկական նպաստամատույց կազմակերպություններին:[11] Այն փաստը, որ Ա. Սաֆրաստյանը, այս շրջանում գտնվելով Կովկասում, օր. Ռոբինսոնին տեղեկություններ էր տրամադրում տիրող իրավիճակի մասին, վկայում է Սաֆրաստյանի՝ 1915թ. հոկտեմբերի 28-ին Ռոբինսոնին հղած նամակը, որում նշվում էր, որ Սաֆրաստյանն այցելել է մի շարք փախստականական ճամբարներ, որբանոցներ և հիվանդանոցներ, և որ մարդիկ ենթակա են սարսափելի տառապանքների սննդի և հագուստի պակասության հետևանքով:[12] Սակայն կարծում ենք, որ բրիտանացիների որոշակի վերապահումներով վերաբերմունքը Կովկասում իրագործվող նպաստամատույց աշխատանքների հանդեպ հետևանք էր ընդհանրապես ռուսական կայսրության և այնտեղ գործունեություն ծավալած կազմակերպությունների հանդեպ բրիտանացիների անվստահության:

Այնուամենայնիվ, Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը շարունակեց իր համագործակցությունը հայկական նպաստամատույց կազմակերպությունների հետ: Այսպես՝ Ռոբինսոնը հայ օրիորդների կոմիտեին փոխանցեց 8000ռ.՝ կոմիտեի հաշվին պահվող որբանոցների օգտին:[13] Թիֆլիսում բնակվող վանուհիների միությունը օր. Ռոբինսոնից ստացավ 3080ռ.՝ ի նպաստ միության նորաբաց արհեստանոցի: Գումարի կեսը փոխանցվեց վանուհիների Երևանի միությանը:[14]

Վասպուրականի կանանց միությունը օր. Ռոբինսոնից ի նպաստ արհեստանոցի ստացավ ևս 1500ռ.: Ռոբինսոնը նաև շնորհակալական գրություն էր ուղարկել միությանը, քանի որ վերջինս Ռոբինսոնին էր ուղարկել միության արհեստանոցում պատրաստված զանազան ձեռագործների նմուշներ:[15]

Հարկ ենք համարում նշել, որ Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդն առավել սերտ հարաբերություններ էր հաստատել Թիֆլիսի Պատերազմի զոհերի կենտրոնական նպաստամատույց կոմիտեի և, մասնավորապես, վերջինիս նախագահ Սամսոն Հարությունյանի հետ: Ընդ որում, ֆոնդը չէր սահմանափակվում միայն ընդհանուր դրամական փոխանցումներ կատարելով, այլ նաև ներգրավվում էր կոնկրետ ծրագրերի իրականացման մեջ: Այսպես, 1916թ. նոյեմբերի 4-ին Ս. Հարությունյանին ուղղված նամակում օր. Ռոբինսոնը գրում էր, որ ստացել է վերջինիս հեռագիրը՝ հայ փախստական երիտասարդների համար Դիլիջանում տեխնիկական դպրոցի և ֆերմերային տնտեսության ստեղծման ծրագրին հնարավոր օժանդակություն ցուցաբերելու մասին: Ռոբինսոնը գրում է, որ իրենց կոմիտեն հանձնարարել է իրեն 6200 ռ. (400 ֆունտ ստեռլինգ) ուղարկել այդ ծրագրի համար: Միաժամանակ Ռոբինսո-

նը տեղեկացնում է, որ ինքը Հարությունյանին է ուղարկել 7750ռ. և խնդրում է գումարի մնացած մասը՝ 1550ռ. (100 ֆունտ ստեռլինգ) հանձնել Վանից եկած արծաթագործների միությանը: Նույն նամակում Ռոբինսոնը խնդրում է մանրամասն զեկույց ուղարկել այն մասին, թե ինչպե՞ս են ծախսվում այդ փողերը, որպեսզի ինքը կարողանա բավարարել բրիտանական իշխանությունների հետաքրքրությունը:[16]

Ռոբինսոնի այս վերջին արտահայտությունը առիթ է տալիս ենթադրել, որ բրիտանական նպաստամատույց կազմակերպությունների՝ Ռուսաստան ուղարկվող միջոցների ճակատագրի և դրանց ծախսման նպատակահարմարության հետ կապված անհանգստությունը որոշակիորեն գալիս էր նաև բրիտանական իշխանություններից:

Ֆոնդը շուտով ձեռնամուխ եղավ նաև մեկ ծրագրի իրականացմանը: 1916թ. դեկտեմբերի 22-ին Ս. Հարությունյանին ուղղված նամակում օր. Ռոբինսոնը տեղեկացնում էր, որ ֆոնդը որոշել է Ալեքսանդրապոլում որբանոց հիմնել 100 սասունցի երեխաների համար, և այդ նպատակով արդեն փոխանցել են 4635ռ. (300 ֆունտ ստեռլինգ): Նույն նամակում Ռոբինսոնը խնդրում է տեղեկացնել Ալեքսանդրապոլում տիրող ընդհանուր վիճակի և որբանոցը պահելու համար անհրաժեշտ ամսական գումարի չափի մասին:[17]

Նշենք, որ ֆոնդն, իրոք, ձեռնամուխ եղավ այս ծրագրի իրականացմանը, սակայն միջոցների որոշակի պակասը հարկադրեց նրան որոշակիորեն կրճատել իր աշխատանքի ծավալները, մանավանդ, որ այն չէր սահմանափակվում միայն վերը նշված ծրագրերով: 1917թ. հունվարի 29-ի Հարությունյանին ուղարկված իր նամակում Ռոբինսոնը գրում է, որ բարձր գների պատճառով իրենք գտնում են, որ ճիշտ կլիներ սկսել Ալեքսանդրապոլի որբանոցի աշխատանքները 40 երեխաներով: Ռոբինսոնը նաև գրում է, որ իրենք ուրախ կլինեին, եթե արվածի մասին իրենց տեղեկություններ ուղարկվեն: Նույն նամակում Ռոբինսոնը նշում է, որ ֆոնդի անունից հունվարի 25-ին 500 ֆունտ ստեռլինգի (8225ռ.) գումար է ուղարկել Հարությունյանին, որը նախատեսված է հանձնել Էրզրումում գտնվող Զավեն եպիսկոպոսին և դոկտոր Զավրիևին՝ Էրզրումի փախստականներին օգնելու համար:[18]

Ռոբինսոնին ուղարկված իր հերթական նամակում Հարությունյանը ներկայացնում է նրանից ստացած գումարների ամբողջական տվյալները, որոնց համաձայն օր. Ռոբինսոնից ստացվել էր 6200ռ. Դիլիջանում փախստականների համար ստեղծված արհեստանոցի օգտին, 3200ռ. Երևանի կանանց կոմիտեի օգտին՝ փախստականներին օգնելու համար, 1550ռ. Վանի արծաթագործ փախստականների համար, 8225ռ. սասունցի երեխաների որբանոցի համար, 8225ռ. Էրզրումի և Երզնկայի փախստականների համար:[19]

Ֆոնդը որոշակի հաջողություններ ուներ նաև Բրիտանիայում գումարներ հավաքելու գործունեության մեջ: 1916թ. դեկտեմբերի դրությամբ, այսինքն երկու տարվա գործունեության արդյունքում, ֆոնդը հավաքել էր 8774 ֆունտ ստեռլինգ գումար՝ չհաշված ստացված զանազան իրերը:[20]

Նշենք, որ 1916թ. վերջին Է. Ռոբինսոնը հրատարակեց «Հայաստան և հայերը» ութ էջանոց բրոշյուրը: Այստեղ համառոտ ներկայացվում էր հայ ժողովրդի և հայ եկեղեցու պատմությունը՝ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը: Այնուհետև նշվում էր, որ 1915-1916թթ. օսմանյան կառավարության կարգադրությամբ նվազագույնը 500000 հայ է

սպանվել և գրեթե այդքան մարդ էլ քշվել է դեպի անապատներ:[21] Այսուհետ՝ նշում էր, որ Թուրքահայաստանի նահանգների բնակչության մնացորդները՝ մոտավորապես 250000 մարդ, գտնվում են Կովկասում և ունեն օգնության կարիք և կոչ էր արվում նվիրատվություններ ուղարկել Է. Ռոբինսոնին:[22]

Ֆոնդը նվիրատվություններ էր հավաքում տարբեր ձևերով: Դրանցից մեկն այսպես կոչված «Հայկական դրոշի օրերի» կազմակերպումն էր: Դրանք կազմակերպվում էին Մեծ Բրիտանիայի տարբեր քաղաքներում: Դրանց ընթացքում վաճառվում էին հայկական դրոշներ, իսկ վաճառքից գոյացած գումարները ամբողջովին անցնում էին ֆոնդի տրամադրության տակ:

Առաջին այդպիսի միջոցառումը տեղի ունեցավ Մանչեստրում և Սոլֆորդում 1916թ. հոկտեմբերի 13-ին և 14-ին: Վաղօրոք քաղաքի մարդաշատ վայրերում փակցվել էին պլակատներ, որոնք տեղեկացնում էին միջոցառման մասին: Ընդ որում այս միջոցառմանը իրենց մասնակցությունը բերեցին ինչպես հայ գաղութի ներկայացուցիչները, այնպես էլ զգալի թվով անգլուհիներ և բելգուհիներ:[23]

Այս առաջին միջոցառման հաջողությունը նպաստեց նմանատիպ այլ միջոցառումների իրականացմանը: «Հայկական դրոշի օրեր» կազմակերպվեցին 1916թ. հոկտեմբերի 21-ին՝ Վիտի քաղաքում, հոկտեմբերի 28-ին՝ Լեդիբանքում, նոյեմբերի 18-ին՝ Սիլնգարնվիում, նոյեմբերի 25-ին՝ Նորս Բերվիքում, նույն օրը նաև Բրիջ օֆ Ալենում, դեկտեմբերի 2-ին՝ Դեննիում, դեկտեմբերի 4-ին Լիդսում: Նմանատիպ մեծ միջոցառում ֆոնդը ծրագրել էր դեկտեմբերի 18-ին անցկացնել նաև Լիվերպուլում: Ֆոնդին հաճախ ֆինանսական օգնություն էին տրամադրում Բրիտանիայում գործող տարբեր հասարակական կազմակերպություններ: Այսպես, Հիլսթոն քաղաքի «Դաշնակիցների օգնության ֆոնդը» ուղարկել էր 125 ֆունտ ստեռլինգ: Որոշ գումարներ էին փոխանցել ֆոնդին նաև Աբերդինի «Քաղաքացիների լիգան», Լամփեթերի «Դաշնակիցների օգնության հայրենասերների կոմիտեն», Վուլվերհեմփթոնի «Դաշնակիցների ֆոնդի» քաղաքային ղեկավարությունը, Միդլսբրոյի «Նպաստների կենտրոնական ֆոնդի» քաղաքային ղեկավարությունը, Ռոթերհեմի «Նպաստների կենտրոնական ֆոնդի» քաղաքային ղեկավարությունը, Սթոկթոնի «Նպաստներ հատկացնող դաշնակիցների ընդհանուր կոմիտեն» և այլ կազմակերպություններ:[24]

1917թ. ընթացքում ֆոնդը շարունակեց իր գործունեությունը հումանիտար օգնության բնագավառում: Ս. Հարությունյանի՝ Ռոբինսոնին ուղարկված 1917թ. ապրիլի 6-ի նամակից պարզ է դառնում, որ 1917թ. հունվարի 15-ից Ալեքսանդրապոլում բացվել է սաստնցի 40 երեխաների համար նախատեսված որբանոցը: Միաժամանակ նշվում է, որ որբանոցի համար ստացված 4600ռ. ծախսվել է մինչև 1917թ. մարտի 15-ը: Նույն նամակից պարզ է դառնում, որ ֆոնդը ապրիլի 3-ին ևս 6660ռ. է փոխանցել Հայոց կենտրոնական կոմիտեի անունով:[25]

Ֆոնդի Կովկաս ուղարկված գումարների մասին մանրամասն տեղեկություններ են պարունակվում Ս. Հարությունյանի՝ Ռոբինսոնին ուղարկված 1917թ. հոկտեմբերի 5-ի նամակում: Համաձայն դրանց 1916թ. նոյեմբերի 9-ից մինչև 1917թ. հունիսի 11-ն ընկած ժամանակամիջոցում Հայոց կենտրոնական կոմիտեն Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդից ստացել է 41412ռ., որոնք բաշխվել են հետևյալ կերպ. տարբեր անձանց և կազմակերպությունների հատկացվել է 18420ռ., Դիլի-

ջանի արհեստանոցին հատկացվել է 12342ռ. և Ռոբինսոնի անվան որբանոցին հատկացվել է 10650ռ.: Որբանոցի համար նախատեսված միջոցները ծախսվել են հետևյալ կերպ. կահավորանքի համար 1600ռ. (յուրաքանչյուր երեխայի համար 40ռ.), ընդհանուր ամսական գումարը՝ 1000ռ. (յուրաքանչյուր երեխային պահելու համար ամսական գումարը 25ռ.): 1917թ. հունվարի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում՝ 9000ռ.: Որբանոցի համար ընդհանուր ծախսը 10600ռ., դրամարկղային մնացորդը կազմել է 50ռ.:[26]

Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը շարունակում էր միջոցների ուղարկումը Ս. Հարությունյանին: 1917թ. հոկտեմբերի 14-ին Հայկական կենտրոնական կոմիտեի նիստում վերջինս հայտարարեց, որ Ռոբինսոնի կոմիտեից ստացել է հետևյալ գումարները. 5900ռ.՝ Ալեքսանդրապոլի որբանոցի օգտին, 4425ռ.՝ Դիլիջանի արհեստանոցների օգտին և 2950ռ.՝ Արևմտահայ ուսուցչական միության օգտին:[27]

Ֆոնդը շարունակում էր նաև միջոցներ ուղարկել նաև Թիֆլիսի քաղաքագլուխ Խատիսովին, որոնք չնայած որոշակի ուշացումներին, տեղ էին հասնում և իրենց դերն ունեին հայ փախստականների դրության թեթևացման համար: Այսպես, 1917թ. հունվարի 27-ին Խատիսովը, Ռոբինսոնին ուղարկված նամակում նշում էր, որ ստացվել են տաք հագուստների չորս տուփեր, որոնք կոմիտեն, դեռևս 1916թ. հունիսի 29-ին, ուղարկել էր Լոնդոնից՝ Արխանգելսկ: Նույն նամակում Խատիսովը գրում է, որ ստացվել են 28 արկղ դեղամիջոցներ, և այդ մասին ինքը Ռոբինսոնին տեղյակ է պահել 1916թ. նոյեմբերի 24-ի նամակով:[28]

Ընդհանուր առմամբ 1917թ. ընթացքում ֆոնդը բարեգործական նպատակներով հավաքել էր ավելի քան 11500 ֆունտ ստեռլինգ:

1918թ. իրադարձությունները՝ թուրքական արշավանքը Արևմտյան Հայաստանի, իսկ այնուհետև՝ Արևելյան Հայաստանի մի շարք շրջանների գրավումը թուրքական զորքերի կողմից, հաղորդակցական ուղիների փակվելն իրենց ազդեցությունն ունեցան նաև ֆոնդի գործունեության վրա: Այն գրեթե դադարեցրեց միջոցներ առաքել Անդրկովկաս, սակայն շարունակեց իր աշխատանքները Մեծ Բրիտանիայում և 1918թ. վերջից վերսկսեց իր ակտիվ գործունեությունը:

* * *

Քննարկվող ժամանակահատվածում բրիտանական նպաստամատույց ամենախոշոր կազմակերպությունը Հայ փախստականների (Լորդ Քաղաքագլխի) ֆոնդն էր: Ֆոնդի ստեղծման մասին որոշումը Լորդերի պալատի կողմից ընդունվեց 1915թ. հոկտեմբերի 6-ին, իսկ հոկտեմբերի 15-ին այդ որոշման մասին հայտարարվեց Լոնդոնում Լորդ քաղաքագլուխ Չարլզ Ջանստոնի նախագահությամբ հրավիրված միտինգում: Ֆոնդի ստեղծման գործում մեծ ներդրում ունեին Լոնդոնի ապագա Լորդ քաղաքագլուխ Կառլ Ուեյկֆիլդը, պառլամենտի անդամներ, հայանպաստ շարժման մեջ իրենց արժանի տեղն ունեցող պառլամենտականներ Ա. Ուիլյամսը, Ն. Բաքսթոնը և այլք:[29] Ֆոնդի գործունեության կարևորման մասին է վկայում արդեն իսկ այն փաստը, որ նրա մշտական նախագահն էր Լոնդոնի Լորդ քաղաքագլուխը, փոխնախագահների թվում էին Քենթերբերիի և Յորքի արքեպիսկոպոսները, Լոնդոնի եպիսկոպոսը, Անգլիայի կաթոլիկների առաջնորդ կարդինալ Բուրնը, Անգլիայում ռուսական դես-

պան Բենկենդորֆը, Լորդեր Բրայսը, Քերզոնը, Կրոմերը, սըր Էդվին Փիրսը, սըր Վիլիամ Ռամսեյը, Լեդի Ֆրեդերիկ Գավենդիշը: Ֆոնդն ուներ նաև գործադիր կոմիտե, որի նախագահն էր Բրիտանիա-Հայաստան կոմիտեի նախագահ Անեուրին Վիլիամսը, անդամների թվում էին Թ. Փ. Օ'Քոնորը, Նոել Բաքսթոնը, գնդապետ Գրեգորին, օլիդոդ Էմիլի Ռորինսոնը և ուրիշներ, պատվավոր քարտուղարն էր Հարոլդ Բաքսթոնը:[30]

Ֆոնդը քայլեր ծավալեց նաև բրիտանական այլ քաղաքներում հանգանակություններ կազմակերպելու համար: Հոկտեմբերի 25-ին միտինգ տեղի ունեցավ Մանչեստրում, որի ժամանակ ելույթներ ունեցան Լորդ Բրայսը, Անեուրին Վիլիամսը և եպիսկոպոս Վելդոնը: Այս նախնական արշավի ընթացքում Լոնդոնի Լորդ քաղաքագլխի ֆոնդի հաշվին փոխանցվեց 2500 ֆունտ ստեռլինգ: Նշենք, որ Մանչեստրն արդեն ակտիվորեն ներգրավված էր հօգուտ հայերի միջոցների հավաքման գործում: Այստեղ դեռևս 1915թ. հոկտեմբերի 1-ին քաղաքի Լորդ քաղաքագլխի նախագահությամբ տեղի էր ունեցել մի հավաքույթ, որի ընթացքում հայ փախստականների տառապանքները թեթևացնելու համար որոշվել էր ստեղծել «Հայ օգնության ֆոնդ»: Ֆոնդի նախագահ դարձավ քաղաքագլուխ Ալդերման Դանիել Մաքքեյթը, իսկ ֆոնդի կոմիտեի նախագահ՝ քաղաքի խոշոր առևտրական տներից մեկի ղեկավար Թուքալ Բրոդհարսթը: Նույն հավաքույթում հրապարակվեց կոչ, որում նշվում էր, որ այդ ֆոնդի նպատակն է հավաքել գումարներ և փոխանցել Լորդոնի Բրայսի նախագահությամբ գործող Լոնդոնի կոմիտեին (նկատի ունեն Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը):[31]

Լոնդոնի Լորդ քաղաքագլխի ֆոնդը գրեթե ստեղծման պահից սկսեց միջոցների փոխանցումը Կովկաս: Այսպես, 1915թ. դեկտեմբերի 21-ին Ս. Հարությունյանին ուղղված նամակում ֆոնդի քարտուղարը վերջինիս տեղեկացնում էր, որ նախորդ օրը նրան է ուղարկվել 37312ռ.՝ Թիֆլիսի շրջակայքում գտնվող հայ փախստականների համար:[32] Ֆոնդի գործադիր կոմիտեի նախագահ Ա. Վիլիամսը 1916թ. հունվարի 18-ին ուղարկված նամակում տեղեկացնում էր, որ հունվարի 17-ին Թիֆլիսի շրջակայքում գտնվող հայ փախստականների համար փոխանցել են 80750ռ.:[33] 1916թ. փետրվարի 7-ին նույն հասցեով փոխանցվեց ևս 64000ռ.:[34] Մեկ ամիս անց Հայոց կենտրոնական կոմիտեին փոխանցվեց 74750ռ.:[35]

Ֆոնդի վաղ շրջանի գործունեության մասին որոշ տեղեկություններ կան նաև վերջինիս գործադիր կոմիտեի նախագահ Ա. Վիլիամսի՝ Ա. Օռպանյանին 1915թ. նոյմբերի 23-ին հղած նամակում: Այս նամակում Վիլիամսը ցանկություն է հայտնում երկուստեք կատարված աշխատանքների մասին տեղեկատվության փոխանակություն կատարել իրենց և Օռպանյանի կոմիտեի միջև: Վիլիամսը տեղեկացնում է, որ մինչ օրս իրենք հավաքել են 14000 ֆունտ ստեռլինգ, որից 10000-ը ուղարկել են Կովկաս, 550-ը՝ Թավրիզի բրիտանական հյուպատոսին և 170 ֆունտ ստեռլինգ արժողությամբ ապրանքներ՝ Եգիպտոսում գտնվող հայ փախստականների համար: Վիլիամսը գրում է, որ գումարները փոխանցվում են Մոսկվայի բրիտանական գլխավոր հյուպատոսին, որպեսզի վերջինս դրանք փոխանցի Էջմիածին՝ Հայոց կաթողիկոսին: Նա նաև գրում է, որ ևս 3000 ֆունտ ստեռլինգ պատրաստ է ուղարկման համար, սակայն արգործնախարարությունն իրենց առաջարկել է առաքելություն ուղարկել՝ հետազոտելու համար օգնության բաշխման մեթոդները, և քանի որ այդ քայլը շատ ժամա-

նակ կխլի, իրենք խնդրել են, որ այդ խնդիրն ուսումնասիրի Բաքումի բրիտանական հյուպատոսը և խորհուրդ տա գումարների փոխանցման հնարավոր ավելի լավ տարբերակների մասին: Նա նաև Չոպանյանին տեղեկացնում է, որ ֆոնդը չի փորձում որևէ օգնություն ուղարկել Թուրքիա՝ անհավանական համարելով այդ օգնության նպատակին հասնելը:[36]

Ինչպես երևում է նամակից, այս ֆոնդի առջև ևս կանգնած էր Կովկասում գործող հայկական կազմակերպությունների նկատմամբ որոշ անվստահության խնդիրը, որի հիմքը կրկին բրիտանական պաշտոնական իշխանություններին էին: Նշենք, որ վերջիններս ֆոնդին էին ներկայացրել տարածաշրջանում փախստականների վիճակի և առկա նպաստամատույց կազմակերպությունների մասին Բաքումի բրիտանական հյուպատոսի ծավալուն զեկույցը և երկու հուշագրեր:[37]

Այնուամենայնիվ, ֆոնդը որոշեց Կովկաս ուղարկել հատուկ առաքելություն: Նրա մեջ մտնում էին ութ հոգի, այդ թվում՝ ֆոնդի պատվավոր քարտուղար Հարոլդ Բաքսթոնը, բժիշկ Գրահամ Ասպլանդը, որը պատերազմի ընթացքում արդեն ծառայել էր Ֆրանսիայում և Սերբիայում: Ասպլանդին ուղեկցում էին երեք գթության քույրեր՝ օրիորդ Բեատրիս Քարը (որը եղել էր Սերբիայում), օրիորդ Մարգարետ Բարբրը (որը նույնպես եղել էր Սերբիայում, գերվել ավստրիացիների կողմից, և մի քանի ամիս Վիեննայում պահվելուց հետո ազատ էր արձակվել) և տիկին Արմսթրոնգը (որն ուներ զինվորական հիվանդանոցներում աշխատելու երկար փորձ): Առաքելության կազմում էին նաև պրն. Ալֆրեդ Բաքհաուզը, բանկիր Ջորջ Հոջկինը: Առաքելության քարտուղարի պաշտոնը զբաղեցնում էր Ա. Սաֆրաստյանը:[38]

Ապրիլի 2-ին խումբը ժամանեց Պետրոգրադ: Հաջորդ օրը Պետրոգրադի հայկական կոմիտեն ընդունելություն կազմակերպեց ի պատիվ հյուրերի, որին մասնակցեցին և ելույթներ ունեցան Պետական դումայի պատգամավորներ Պապաջանովը և Ամենովը: Պատասխան ելույթում Հարոլդ Բաքսթոնը նշեց, որ իրենց տեղեկությունների համաձայն Ռուսաստանի տարածքում այժմ գտնվում են 250000 հայ փախստականներ: Նա նաև տեղեկացրեց, որ առաքելությունն իր հետ բերել է 45000 ֆունտ ստեռլինգ գումար:[39]

Առաքելության Թիֆլիս ժամանելուց հետո ապրիլի 18-ին Ս. Հարությունյանի նախագահությամբ տեղի ունեցավ Հայոց կենտրոնական կոմիտեի արտակարգ նիստ, որին մասնակցում էին նաև առաքելության անդամները և Ամերիկայից ժամանած բժիշկ Գրեյսին:

Այդ նիստի ընթացքում Ս. Հարությունյանը ներկայացրեց Հայոց կենտրոնական կոմիտեի դրամական հաշիվները: Հրապարակված տվյալների համաձայն 1915թ. դեկտեմբերից մինչև 1916թ. ապրիլի 1-ը կոմիտեն տարբեր աղբյուրներից ստացել էր 841000ռ., որից 252000ռ. ուղարկել էր Լոնդոն քաղաքագլխի կոմիտեն: Պատասխան ելույթով հանդես եկավ Հարոլդ Բաքսթոնը: Արդեն հաջորդ օրը Բաքսթոնի հետ ժամանած բժշկական խումբը մեկնեց Վան:[40]

Առաքելության անդամները չսահմանափակվեցին միայն Թիֆլիսում լինելով: Բաքսթոնի գլխավորությամբ նրանք, կաթողիկոսի հետ հանդիպելու համար, մեկնեցին Էջմիածին:[41] Այնուհետև Բաքսթոնը եղավ Կարինի վիլայեթում, այնտեղից անցավ Վան, իսկ այնուհետև՝ Բիթլիս:[42]

Անգլիա վերադառնալուց առաջ Բաքսթոնը տեղեկացրեց կովկաս-

յան ճակատի փախստականների հարցերով լիազոր գեներալ Թամամշևին, որ գեներալ Վորոնովի թույլտվությամբ իրենց կոմիտեն գյուղատնտեսական օգնություն կցուցաբերի Վանա լճի հարավում գտնվող փախստականներին, ընդ որում այդ աշխատանքները ղեկավարելու էր առաքելության անդամ Բաքիաուզը, որը մնալու էր Կովկասում:

Բաքիաուզը շուտով մեկնեց Վան, որտեղ սկսեց հետևել անգլիական զումարների բաշխմանը և հաշվետվություններ ընդունել փախստականների կազմակերպությունների ղեկավարներից: Այս կապակցությամբ նշենք, որ եթե 1915թ. հոկտեմբերից մինչև 1916թ. ապրիլ անգլիացիները համագործակցում էին հիմնականում Եղբայրական օգնություն և Հայկական կենտրոնական կոմիտե կազմակերպությունների հետ, ապա 1916թ. գարնանից սկսած, երբ Արևմտյան Հայաստանում սկսեցին ավելի նշանակալի դեր խաղալ Հայաստանի վերաշինման հանձնաժողովը և Հայկական գյուղատնտեսական և արհեստագործական ընկերությունը, անգլիացիները որոշեցին հիմնականում համագործակցել նրանց հետ: Միաժամանակ նշենք, որ Լորդ քաղաքագլխի ֆոնդը որոշ միջոցներ տրամադրում էր նաև ազգությամբ ոչ հայ փախստականներին՝ ասորիներին, նաև մահմեդականներին: Այսպես, առկա է փաստացի հավաստում այն մասին, որ Բաքսթոնը մահմեդական բարեգործական ընկերության նախագահին էր հանձնել 15000ռ.:[43]

Անգլիական նպաստամատույց կազմակերպությունները գնալով ավելի շատ ուշադրություն էին դարձնում հայ փախստականների՝ բնակության նախկին վայրերը վերադառնալու խնդրին: 1916թ. հունիսին Լոնդոնի Մենշոն Հաուս սրահում Լորդ քաղաքագլխի նախաձեռնությամբ տեղի ունեցավ այդ խնդրին նվիրված հավաքույթ: Բացելով այն, քաղաքագլուխը հայտարարեց, որ կապված ռուսական զորքերի հաջողությունների հետ, այժմ իրենց առջև դրված խնդիրը որոշակիորեն փոխվել է՝ անհրաժեշտ է մտածել հայրենիք վերադարձող փախստականներին սովի վտանգից փրկելու մասին: Իսկ դրա համար անհրաժեշտ է անհապաղ վերջիններիս տրամադրել 12500 գութան և զգալի քանակությամբ զոմեշներ: Հավաքույթի ընթացքում ելույթ ունեցավ նաև Լորդ Բրայսը, որն ասաց, որ օգնելով տուն վերադարձող հայերին, իրենք օգնում են ողջ Ասիային, որովհետև հայերն իրենցից ներկայացնում են մի խելացի և աշխատասեր ժողովուրդ: Հավաքույթը Թ. Փ. Օ'Քոնորի առաջարկով հեռագիր ուղարկեց ռուսական կառավարությանը՝ վերջինիս շնորհավորելով ռուսական զենքի հաղթանակների, հայկական նահանգները թուրքական տիրապետությունից ազատելու կապակցությամբ:[44]

Խոսելով Բաքսթոնի առաքելության և տարածաշրջանում մնացած Լորդ քաղաքագլխի կոմիտեի ներկայացուցիչ Բաքիաուզի գործունեության մասին, անհրաժեշտ է նշել, որ ցարական իշխանություններն ամենայն ուշադրությամբ հետևում էին նրանց քայլերին: Այսպես, Էջմիածնի գավառական ոստիկանության պետը 1916թ. օգոստոսի 18-ին իր պրիստավներին հրամայել էր խստորեն հետևել Վան այցելած բրիտանացի հպատակներ Մակկալումի և Բաքիաուզի վերադարձին և վերջիններիս հայտնվելու պես իրեն հաղորդել, թե որտե՞ղ են նրանք կանգ առել, ո՞ւմ հետ են շփվում: Նույն պետը մեկ այլ հրամանով պահանջում էր իրեն հաղորդել, թե «Արարատ» հյուրանոցում իջևանած նշված բրիտանացիները ունեցե՞լ են արդյոք որևէ շփումներ և եթե այո, ապա ո՞ւմ հետ և ի՞նչ գործերով:[45]

Տեղական իշխանությունների՝ առաքելության հանդեպ առկա որոշակի անվստահությունը նկատել էին նաև Բաքսթոնն ու Հոջկինը: 1916թ. օգոստոսի 15-ին Համայնքների պալատում Բրիտանիա-Հայաստան կոմիտեի անդամների հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ Հարոլդ Բաքսթոնը՝ հակիճ ներկայացնելով Հայաստան կատարած իրենց այցելությունը և այն սրտագին ընդունելությունը, որին արժանացել են թե՛ Ռուսաստանի և թե՛ Փոքր Ասիայի հայերի կողմից, անդրադարձավ նաև քաղաքական իրավիճակին՝ նշելով, որ այն բարդ է, և ինքը առարկում է այդ հարցի կապակցությամբ որևէ վաղաժամ հրապարակային քննարկման անցկացմանը: Իսկ պրն. Հոջկինը նույն հանդիպման ժամանակ, հիմնականում ներկայացնելով իր տպավորությունները Պարսկաստանի հայերի և այդ շրջաններում ասորիների վիճակի կապակցությամբ, հաստատեց Բաքսթոնի կարծիքը քաղաքական վիճակի դժվարությունների վերաբերյալ՝ նշելով, որ դրանք ոչ քիչ չափով գալիս են ռուս պաշտոնյաների մի մասի հակումից՝ կասկածանքով վերաբերվել բոլոր տիպի «առաքելություններին»:[46]

Բաքսթոնը և Հոջկինը վերադարձից հետո մանրամասն հաշվետվություն ներկայացրին Կովկասում տիրող իրավիճակի, այնտեղ գտնվող հայ փախստականների թվի, նրանց օգնող հասարակական տարբեր կազմակերպությունների, դեպի իրենց նախկին բնակավայրերը փախստականների վերադարձի խնդրի մասին: Զեկույցում նաև բերվում էին փաստեր Պարսկաստանի ասորիների և մահմեդական փախստականների դրության մասին:[47]

Առաքելության վերադարձից հետո էլ ֆոնդը նոր հանգանակությունների կազմակերպման ուղղությամբ շարունակեց իր ակտիվ գործունեությունը ինչպես Բրիտանիայում, այնպես էլ Կովկասում, որտեղ այդ աշխատանքները կորդինացնում էր ֆոնդի ներկայացուցիչ պրն. Բաքհաուզը: 1916թ. դեկտեմբերի դրությամբ ֆոնդի հավաքած ընդհանուր գումարը կազմում էր 62300 ֆունտ ստեռլինգ, որն զգալիորեն գերազանցում էր Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդի այս նույն ժամանակամիջոցում հավաքած գումարին (ավելի քան 8700 ֆունտ ստեռլինգ):[48]

Միաժամանակ, որոշակի փոփոխությունների էր ենթարկվել նաև ֆոնդի գործադիր կոմիտեի կազմը: Գնդապետ Գրեգորին դարձել էր ֆոնդի պատվավոր քարտուղար: Կոմիտեից դուրս էր եկել Է. Ռոբինսոնը, նրա փոխարեն վերջինիս կազմում ընդգրկվել էր Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդի նախագահ Լեդի Բրայսը, նոր անդամներ էին դարձել նաև Ա. Մայմոնդսը, Պատվելի Ֆ. Բ. Մեյերը, Ջ. Հոջկինը, օրիորդ Հիկսոնը:[49]

Կովկասում աշխատանքների առավել լավ կազմակերպման համար 1917թ. հունվարին Թիֆլիս ժամանեց Լորդ քաղաքագլխի ֆոնդի ևս մեկ ներկայացուցիչ՝ պրն. Է. Քեչփուլը: Իր հերթին Ա. Բաքհաուզը շարունակում էր այցելել տարբեր բնակավայրեր՝ փախստականների իրավիճակն ուսումնասիրելու համար: 1917թ. հունվարին նա այցելեց Իգդիր և շրջակա գյուղերը: Իր այցելությունների մասին նա զեկույցներ էր ուղարկում Լոնդոն:

Իգդիր կատարած այցելության մասին զեկույցում Բաքհաուզն առաջ էր քաշում այն միտքը, որ անհրաժեշտ է աշխատատեղեր բացել փախստական կանանց՝ հատկապես նրանց համար, ովքեր կորցրել են իրենց ամուսիններին: Բաքհաուզը գրում էր, որ որոշել է Իգդիրում բամբա-

կազմակերպության արտադրություն հիմնել և արդեն վարձել է համապատասխան տարածք և ձեռք բերել որոշ սարքավորումներ:[50]

Այս առաջարկը հավանության արժանացավ ֆոնդի կողմից: Արդեն 1917թ. մարտի սկզբին փոքրիկ գործարանը սկսել էր աշխատել: Սկզբնական շրջանում աշխատանք կար միայն մանողների համար, բոլոր ցանկացողներին տրվում էր անվճար ճաշարակ և շաբաթական երեք ֆունտ բամբակ, յուրաքանչյուր ֆունտի համար 1ռ. վարձավճարով: Միջինը յուրաքանչյուր աշխատող կարող էր ամսեկան 12ռ. աշխատավարձ ստանալ: Ընդ որում սկզբնական շրջանում աշխատողների թիվը հասնում էր 100-ի:[51]

Փախստականների համար աշխատատեղեր ստեղծելու նպատակով փոքր ձեռնարկությունների հիմնումը նորություն չէր: Մենք արդեն նշել ենք, որ Դիլիջանում նմանատիպ արհեստանոց հիմնելու համար որոշակի գումարներ տրամադրեց Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը: Նման արհեստանոցներ ստեղծվեցին նաև Երևանում, Նոր Բայազետում և այլ վայրերում:[52]

Լոնդ քաղաքագլխի ֆոնդը ևս, որպես միջոցներ հավաքելու հաջողված տարբերակ, ձեռնամուխ եղավ «Հայկական որոշի օրերի» կազմակերպմանը: Նման ամենախոշոր միջոցառումը տեղի ունեցավ 1917թ. հունիսի 13-ին, Լոնդոնում:

Այդ օրը որոշների վաճառք էր կազմակերպվել քաղաքի բոլոր քաղամասերում: Վաղօրոք աչքի ընկնող տեղերում փակցվել էին տարբեր կոչեր՝ հորդորելով քաղաքի բնակիչներին ակտիվ մասնակցություն ցուցաբերել միջոցառմանը: Նշենք, որ միջոցառումից ստացված հասույթն ավելի մեծ կլիներ, եթե նույն օրը առավոտյան գերմանական ինքնաթիռները չռմբակոծեին Լոնդոնի կենտրոնական թաղամասերը:[53]

Ֆոնդի կազմակերպած միջոցառումներից կարելի նշել նաև «Հայկական կիրակիների» կազմակերպումը, որոնց ընթացքում եկեղեցիներում ընթացող ժամերգությունների ժամանակ հոգևորականները ներկայացնում էին պատերազմի ընթացքում հայ ժողովրդի կրած կորուստները և կոչ անում ունկնդիրներին՝ հնարավորության սահմաններում օժանդակել նրան:

Ընդհանուր առմամբ, ֆոնդը 1917թ. հուլիսի դրությամբ ստացել էր ավելի քան 78000 ֆունտ ստեռլինգ, չհաշված Լոնդոնում անցկացված «Հայկական որոշի օրի» ընթացքում հավաքված գումարը:[54] Ֆոնդը շարունակում էր Իգդիրի մանածագործական ձեռնարկությունում ավելացնել աշխատողների թիվը: Արդեն 1917թ. սեպտեմբերին այնտեղ աշխատում էին շուրջ 500 կին, ովքեր, համաձայն Ա. Բաքհաուզի՝ ֆոնդին ուղարկված զեկույցի, ստանում էին 3 ռ. աշխատավարձ: Միաժամանակ Բաքհաուզը նշում էր, որ դժվարություններ կան արտադրանքն իրացնելու գործում, ուստի իրենք որոշել են սկսել հյուսման աշխատանքներ, և պրն. Քեչփուլը գնացել է Մոսկվա՝ ջուլհակահաստոցների մասեր գնելու համար: Միաժամանակ ֆոնդը տեղի հիվանդանոցում աշխատելու համար նպատակով Երևան էր ուղարկել դոկտոր Քենեդիին՝ իր վրա վերցնելով բոլոր ծախսերը:[55]

Ֆոնդը որոշ գումարներ էր տրամադրում նաև Միջագետքում գտնվող հայ փախստականներին օգնելու համար: Այսպես, 1917թ. մայիսին այն 1000 ֆունտ ստեռլինգ էր ուղարկել Բաղդադ՝ գնդապետ Հոուքերին՝ հայ փախստականներին օգնություն տրամադրելու համար: 1917թ. դեկտեմբերի դրությամբ ֆոնդը հավաքել էր շուրջ 85500 ֆունտ ստեռլինգ գումար:[56]

Հարկ է նաև նշել, որ ֆոնդը հատուկ որոշմամբ իր տրամադրության տակ եղած գումարների 10%-ը ծախսում էր ասորիների և այլ ազգերի պատկանող փախստականներին օգնելու համար:

Ֆոնդի Կովկասում ծավալած գործունեությանը լուրջ հարված հասցրեց 1918թ. թուրքական արշավանքը և վերջիններիս կողմից զգալի տարածքների օկուպացումը: Ֆոնդը փաստորեն դադարեցրեց իր ծրագրերի իրականացումը տարածաշրջանում, իսկ նրա ներկայացուցիչ Բաքիաուզը վերադարձավ Լոնդոն: 1918թ. հուլիսի 23-ին նա Լոնդ քաղաքագլխի ֆոնդի գործադիր կոմիտեի և Բրիտանիա-Հայաստան կոմիտեի համատեղ հանդիպման ժամանակ հանդես եկավ ելույթով՝ ներկայացնելով Կովկասում առկա իրավիճակը:[57]

Այնուամենայնիվ, ֆոնդը չդադարեցրեց իր գործունեությունը և արդեն 1919թ. վերսկսեց իր ծրագրերը Հայաստանի Հանրապետությունում՝ դրանց իրագործումը շարունակելով նաև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո:

* * *

Մենք արդեն անդրադարձանք մարդասիրական օգնության բնագավառում գործող բրիտանական երկու ամենամեծ կազմակերպությունների՝ Հայ փախստականների (Լոնդ քաղաքագլխի) ֆոնդի և Հայկական կարմիր խաչ և փախստականների ֆոնդի գործունեությանը: Այս շրջանում, ճիշտ է զգալիորեն ավելի փոքր ծավալով, գործում էին նաև հայ ժողովրդին օգնելու նպատակով ստեղծված այլ կազմակերպություններ ևս: Արդեն իսկ հիշատակված՝ 1915թ. հոկտեմբերի 1-ին Մանչեստրում ստեղծված կոմիտեից բացի (որի նպատակն էր միջոցներ հավաքել և տրամադրել Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդին), 1917թ. Մանչեստրում հիմնվեց ևս մեկ կազմակերպություն՝ Հայ որբերի ֆոնդը: Նրա ստեղծման մասին 1917թ. մարտի 11-ին հաղորդում հրապարակեց «Մանչեստր Գարդիան» պարբերականը:[58]

Ֆոնդի նախագահն էր Մանչեստրի Լորդ քաղաքագլուխը, պատվավոր նախագահն էր Լորդ Բրայսը, քարտուղարն էր Դանիել Մաք Քեյբը, գանձապահը՝ Ջոն Մուդին, պատվավոր քարտուղարն էր Մանչեստրի հայ համայնքի ներկայացուցիչ Ա. Մանաշյանը:[59] Վերջինս դեռ մինչև ֆոնդի կազմումը որոշ գումարներ էր ուղարկել Հայոց կենտրոնական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին: Այսպես, 1917թ. փետրվարի 21-ին ստացված հեռագրով Մանաշյանը Հարությունյանին հայտնում էր, որ ուղարկել է 7000ռ.:[60] Ֆոնդը ևս իր հավաքած միջոցները առաքում էր նույն հասցեով: Այսպես, 1917թ. մայիսի 18-ին ստացված հեռագրում նշվում էր, որ ֆոնդը Ս. Հարությունյանին է ուղարկել 5000ռ.: Հուլիսի 3-ին ստացված հեռագրում նշվում էր ևս 6000ռ. ուղարկելու մասին: Բացի այդ, Մանաշյանը գրում էր, որ կոմիտեն որոշել է իր բոլոր միջոցները դնել Ս. Հարությունյանի կոմիտեի տրամադրության տակ:[61]

Խոսելով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ստեղծված բրիտանական նպաստամատույց կազմակերպությունների մասին, որոնց նպատակն էր օգնել հայ ժողովրդին, անհրաժեշտ ենք համարում հիշատակել նաև Գլազգոյում ստեղծված Հայ փախստականների Լորդ Փրովոսթի ֆոնդը: Վերջինիս նախագահն էր Լորդ Փրովոսթը, պատվավոր քարտուղարն էր սըր Ջոն Լինդսեյը, պատվավոր գանձապետը՝ սըր

Ջոն Սամուելը: Այն իր հավաքած միջոցները տրամադրում էր Լոնդոնի Լորդ քաղաքագլխի ֆոնդին: Ստեղծված լինելով 1915թ. վերջին՝ այն մինչև 1917թ. նոյեմբերը Գլազգոյի քաղաքացիներից ստացել էր գրեթե 4000 ֆունտ ստեռլինգ:[62]

* * *

Ամփոփելով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հումանիտար բնագավառում բրիտանական հայանպաստ կազմակերպությունների ծավալած գործունեությունը՝ կարող ենք ասել, որ նրանք տարբեր ճանապարհներով զգալի գումարներ ստանալով՝ դրանք հիմնականում ուղղեցին փախստականներին և որբ երեխաներին օգնելու գործին: Այդ աշխատանքներում նրանք ակտիվ համագործակցություն ծավալեցին տարածաշրջանում գործող հայկական քարեգործական տարբեր կազմակերպությունների՝ հիմնականում Հայկական կենտրոնական կոմիտեի հետ՝ վերջինիս ուղարկելով զգալի գումարներ: Միևնույն ժամանակ իրականացվող քայլերի հանդեպ տեղում հսկողություն սահմանելու նպատակով այդ կազմակերպություններից ամենախոշորը՝ Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդը Կովկաս ուղարկեց հատուկ առաքելություն և տարածաշրջանում ունցավ իր մշտական ներկայացուցիչը: Այս կազմակերպությունները քայլեր ձեռնարկեցին նաև փախստականների համար տարբեր բնույթի աշխատատեղեր ստեղծելու ուղղությամբ, ինչը, մեր կարծիքով, առավել օգտակար էր: Ճիշտ է 1918թ. այդ կազմակերպությունները հիմնականում դադարեցրին իրենց գործունեությունը տարածաշրջանում՝ կապված քաղաքական և ռազմական աննպաստ պայմանների հետ, այսուհանդերձ կարելի է հավաստել, որ նրանց գործունեությունն իր արդյունքներն ունեցավ հարյուր հազարավոր հայ փախստականների դրության, թեկուզ դույզ ինչ, թեթևացման համար, և այդ առումով արժանի է գովեստի ու գնահատականքի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] "Ararat", London, vol. II, N 18, December, 1914, pp. 205-208.
[2] Ֆոնդի ղեկավար անդամների ամբողջական ցուցակը տես՝ ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 28, ց. 1, գործ 901, թերթ 14,:
[3] "Ararat", vol. II, N 19, Januar, 1915.
[4] "The Times", Tuesday, January 12, 1915.
[5] "Ararat", vol. II, N 22, April, 1915, p. 393.
[6] Հարությունյան Ա. Հայոց Մեծ եղեռնը և հայ գաղթականությունը Կովկասում 1914-1916թթ., Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, թիվ 6, Երևան, 2002, էջ 25:
[7] Նույն տեղում, էջ 25-26:
[8] "Ararat", vol. III, N 30, December, 1915, pp. 279-281.
[9] "Армянский Вестник", Москва, N 8, 1916, 20 марта, стр. 14.
[10] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1286, թ. 5-15:
[11] Նույն տեղում, թ. 2-3:
[12] Նույն տեղում, թ. 1:

[13] «Մշակ», Թիֆլիս, թիվ 39, 1916, փետրվարի 21, էջ 3 և Վան-Տոսպ, Թիֆլիս, 1916, թիվ 12, փետրվարի 14, էջ 16:
[14] «Մշակ», 1916, թիվ 143, հունիսի 30, էջ 3:
[15] «Վան-Տոսպ», 1916, թիվ 51, նոյեմբերի 13, էջ 15:
[16] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, g. 1, գ. 901, թ. 15-16:
[17] Նույն տեղում, գ. 158, թ. 24-25:
[18] Նույն տեղում, գ. 901, թ. 14:
[19] Նույն տեղում, գ. 901, թ. 23-24:
[20] "Ararat", vol. IV, N 42, December, 1916, pp. 270-272.
[21] Robinson E. Armenia and the Armenians, London n.d., pp. 3-7.
[22] Ibid, p. 8.
[23] "Армянский Вестник", N 40, 1916, 30 октября, стр. 16.
[24] Там же, N 1, 1917, 1 января, стр. 18-19.
[25] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, g. 1, գ. 901, թ. 20-22:
[26] Նույն տեղում, թ. 2:
[27] «Համբավարեր», թիվ 35, 1917, հոկտեմբերի 29, էջ 690:
[28] "Ararat", vol. IV, N 46, April 1917, p. 464.
[29] Акопян С. Западная Армения в Планах Империалистических Держав в Период Первой мировой войны, Ереван, 1967, стр. 90.
[30] Ֆոնդի ամբողջ կազմը տես՝ Ararat, vol. III, N 28, October, 1915, p. 136.
[31] Ibid, pp. 153-162.
[32] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, g. 1, գ. 423, թ. 67:
[33] Նույն տեղում, թ. 49 և «Համբավարեր», թիվ 3, 1916, հունվարի 10, էջ 82:
[34] «Համբավարեր», 1916, թիվ 7, փետրվարի 7, էջ 210 և ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, g1, գ. 423, թ. 16:
[35] «Վան-Տոսպ», 1916, թիվ 16, մարտի 13, էջ 16:
[36] Գրականության և արվեստի բանգարան, Արշակ Չոպանյանի ֆոնդ, բաժին III, թիվ 9385:
[37] "Ararat", vol. III, N 31, January, 1916, p. 312-317. և vol. III, N 32, February, 1916, pp. 358-371.
[38] «Համբավարեր», 1916թ, թիվ 17, ապրիլի 24, էջ 517-518:
[39] "Армянский Вестник", 1916, NN 12-13, 24 апреля, стр. 33.
[40] «Համբավարեր», 1916, թիվ 17, ապրիլի 24, էջ 518-519:
[41] «Վան-Տոսպ», 1916, թիվ 25, մայիսի 15, էջ 16:
[42] «Համբավարեր», 1916, թիվ 24, հունիսի 12, էջ 753:
[43] Акопян С. նշվ. աշխ., стр. 97.
[44] "Армянский Вестник", 1916, N 22, 26 июня, стр. 16-17.
[45] Акопян С. նշվ. աշխ., стр. 102.
[46] Rhodes House Library, Oxford, Mss. Brit. Emp. S. 22 G. 506 (1), Minute book of the British Armenia Committee, Oct. 13, 1915-Feb. 21, 1921, quoted 15 august 1916 (այսուհետև՝ Rhodes House Library, BAC minutes).
[47] Զեկույցի ամբողջական տեքստը տես՝ "Ararat", vol. IV, N 39, September 1916, pp. 110-126 և "Ararat", vol. IV, N 40, October 1916, pp. 165-173.
[48] "Ararat", vol . IV, N 42, December, 1916, pp. 244-245.
[49] Ibid, p. 240.
[50] Ibid, N 45, March, 1917, pp. 411-415.
[51] «Վան-Տոսպ», 1917, թիվ 16, մարտի 12, էջ 10:
[52] Акопян С. նշվ. աշխ., стр. 91.
[53] "Армянский Вестник", 1917, NN 41-42, 22 октября, стр. 18-19, միջոցառման նախապատրաստման մասին տես՝ «Արձագանք Փարիզի», Փարիզ, 1917, թիվ 5, հունիսի 10, էջ 5:
[54] "Ararat", vol. V, N 49, July, 1917, p. 6.

[55] Ibid, N 51, September, 1917, pp. 125-126.
[56] Ibid, vol. IV, N 48, June, 1917, p. 526.
[57] Rhodes House Libraray, BAC minutes, quoted 23 july, 1918.
[58] Акопян С. նշվ. աշխ., стр. 91.
[59] «Համբավարեր», 1917, թիվ 22, հունիսի 11, էջ 480:
[60] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 159, թ. 13:
[61] Նույն տեղում, թ. 26 և թ. 14:
[62] "Ararat", vol. V, N 53, November, 1917, p. 196.

Резюме

Помощь британских проармянских организаций армянским беженцам в период Первой мировой войны

Бениамин Погосян

Обозрая деятельность британских проармянских организаций в сфере предоставления гуманитарной помощи в период Первой мировой войны, можно сказать, что разными путями приобретая значительные суммы, эти организации в основном направили их в помощь беженцам и сиротам. В этой работе они активно сотрудничали с действующими в регионе разными армянскими благотворительными организациями, в основном с армянским центральным комитетом, посылая им значительные суммы. В тоже время, с целью установления контроля над предпринимаемыми на месте шагами, самый крупный из этих организаций, фонд армянских беженцев лорда мера, направил на Кавказ специальную миссию и имел в регионе постоянного представителя.

Эти организации предпринимали шаги для создания рабочих мест для беженцев, что, по нашему мнению, было более полезным. Хотя в 1918г. в связи с неблагоприятной военной и политической обстановкой эти организации в основном приостановили свою деятельность в регионе, но можно сказать, что их действия в какой-то степени принесли свою лепту в дело облегчения страданий армянских беженцев и поэтому, достойны похвалы и благодарности.

Summary

The Assistance of British Pro-Armenian Organizations to the Armenian Refugees during World War I

Beniamin Poghosyan

Summarizing the activity of the British proarmenian organizations working in the field of humanitarian aid, a conclusion can be made that the considerable amounts of money attained from various sources were directed mainly to the relief of refugees and orphans. In that work they collaborated actively with various Armenian benevolent organizations, especially with the Armenian Central Committee rendering the latter financial help. The biggest of those organizations, The Armenian Refugees (Lord Mayor's) Fund, sent a special mission to the region for supervising over the steps being taken there and had a permanent representative in the region.

A more useful work of these organizations was creating of working places for the refugees. In 1918 they ceased their activity in the region owing to the unfavorable military and political situation; but it can be said that their activity proved helpful to the alleviation of hundreds of thousands of the Armenian refugees, and therefore their work deserves gratitude and high appreciation.